

9668

ԲՈՒՆԱՐՆԵՐ ԲՈՂՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅՆՔ

ՌԵՎՈԼՅՈՒՑԻՑԻՈՆ ՄԱՐՏԻԿՆԵՐ



3K159.

Ռ-37

ՀԵՏԿԵՎԱՆ ՍՍՌԻ ՄԱՊՐԻ ԿԵՆՏՐՈՆ
ԵՐԵՎԱՆ 1940

3K154

Ռ-37

09 DEC 2008
ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ
25 SEP 2006

ՌԵՎՈԼՅՈՒՑԻՑԻՈՆ ՄԱՐՏԻԿՆԵՐ

ԱՆՆԱ ՊԱՌԻԿԵՐ
ԻՅՈՐԴԱՆ ԼՅՈՒՏԻԲՐՈՂՄԱԿԻ
ՍԻՌԻՑԻ ԻՑԻԿԱՎԱ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌԻ ՄՈՊՐԻ ԿԵՆՏԿՈՄ
ԵՐԵՎԱՆ 1940

24 JUL 2013

9668

Հայկական ՍՍՌ ՄՕՊՐ-ի Կենտրոնը հրատարակելով սույն բրոշյուրը, որի մեջ զետեղված է երեք հերոս ռեվոլյուցիոն մարտիկների — Բուլղարիայի աշխատավորության զավակ — աննկոն ռեվոլյուցիոներ Բորդան Լուսիբրոդսկու, Ռումինայի ժողովրդի հարազատ գույտը, Ռումինայի հեղափոխական կանանց սիմվոլ Աննա Պաուկերի և Ճապոնիայի կոմմունիստական պարտիայի գլխավոր քարտուղար, — փորձված ու հմուտ ռեվոլյուցիոներ Սիոբեյ Իցիկավայի համառոտ կենսագրությունները, համոզված ենք, որ մեր ՄՕՊՐ-ական մասսաները մեծ հաճությամբ կկարդան ու կուսումնասիրեն ռեվոլյուցիոն մարտիկների կյանքն ու սլաքարը, որոնք իրենց կյանքը շխնայեցին Լենինի-Ստալինի սրբազան մեծ գործի համար — բանվոր դասակարգի ազատագրական գործի համար:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄՕՊՐ-Ի ԿԵՆՏՐՈՆ



2428
40



ԱՆՆԱ ՊԱՈՒԿԵՐ

ԱՆՆԱ ՊԱՌԻԿԵՐ

Յերեք տարուց ավելի է, ինչ տառապում է ուսմիական բանտերում անվախ հեղափոխական ԱՆՆԱ Պառլկերը: Իր ամբողջ կյանքը նա նվիրել է ուսմիական ժողովրդի ազատության պայքարին:

ԱՆՆԱ Պառլկերը ծնվել է 1897 թվին Պիատրենյամցում, չքավոր ուսուցչի ընտանիքում: Աղքատության և զրկանքների մեջ է անցել նրա մանկությունը: Մեծ դժվարություններով, միայն շնորհիվ իր բացառիկ ընդունակությունների, Աննային հաջողվում է անցնել միջնակարգ դպրոցի 4 դասարանը: Վորպեսզի ոգնի ընտանիքին, նա 12 տարեկան հասակից դասեր է տալիս, իսկ 17 տարեկան հասակում ուսուցչուհու տեղ է ստանում Բուխարեստի հրեական դպրոցում: Այնտեղ նա հանդիպում է սոցիալ-դեմոկրատների, հաճախում է նրանց ակումբը: Շուտով Աննան դառնում է կրակոտ պրոպագանդիստ, տարածում է սոցիալիստական թերթեր: Դպրոցի դիրեկցիան վախենալով Աննայի հեղափոխական գործնեյությունից, նրա խոշոր ազդեցությունից աշակերտուհիների վրա՝ հեռացնում է նրան դպրոցից:

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխությունը Ռուսաստանում հսկայական ազդեցություն ունեցավ բանվորական շարժման վրա Ռումինիայում:



Աննա Պաուկերը ակտիվորեն մասնակցում է հեղափոխական բանվորական շարժմանը:

1919 թվի աշնանը նա գնում է Շվեյցարիա շարունակելու ուսումը: Այնտեղ նա հեղափոխական աշխատանք է տանում Ռումինական ուսանողների միջև:

1921 թվի մայիսին Ռումինիայի սոցիալիստական կուսակցության համագումարը, կուսակցության ձախ տարրերի ճնշման տակ, բանաձև է ընդունում՝ մտնելու Կոմունիստական Ինտերնացիոնալի մեջ: Բայց ռումինական բուրժուական պարտիան ձգտում է մասսայական բանտարկություններով խեղդել յերիտասարդ կոմունիստական պարտիային: Բուրժուական պարտիան պաշտպանում է սոցիալ-դեմոկրատական պարտիայի ոպորտունիստական դեկավարներին, վորոնք դավաճանական աշխատանք էյին տանում բանվոր դասակարգի շարքերում:

Իմանալով համագումարի պատգամավորների ձերբակալման մասին, վորոնք քվեարկել էյին Կոմինտերնին միանալու համար, Աննա Պաուկերը հայրենիք է վերադառնում և իր ամբողջ ուժերը տալիս է պարտիայի ամրապնդման գործին: Աննայի գործնելությունը բազմազան է: Նա դեկավարում է Ռումինական կոմունիստական պարտիայի ԿԿ-ին կից կանանց հանձնաժողովը, կազմակերպում է բանվորուհիների շարժումը: Ավելի ուշ՝ նա դառնում է ՄՈՊՐ-ի Ռումինական բեկյիայի դեկավարը: Տաղանդավոր ագիտատոր, Աննա Պաուկերը շնորհալի աշխատանքներ է ծավալում պրոֆմիություններում և կանգնում է պրոֆմիոնիստական շարժման գլուխը Ռումինիայում:

1924 թվին ռեակցիան ընդհատակը նետեց ռու-

մինական կոմպարտիային: Սկսվեց դաժան տերրորը: Աննային մի քանի անգամ բանտարկում են:

1927 թվին նա Բուխարեստից գնում է Տրանսիլվանիա, ուր անլեզալ կերպով շարունակում է աշխատել: Վոստիկանության հետապնդումներից նա ստիպված է լինում գնալու արտասահման: Փարիզ, Բեռլին, Պրագա, Վիեննա—ահա այն քաղաքները, վորտեղ Աննա Պաուկերը շարունակում էր հեղափոխական գործնելությունը: Բայց կապված լինելով իր ժողովրդի հետ, նա շուտով եմիգրացիայից վերադառնում է Ռումինիա:

Ռումինական գաղտնի վոստիկանությունը—սիգուրացան, ռումինական բուրժուազիայի և բոյարների պատվարը—վաղուց էր ձգտում վորսալ Աննա Պաուկերին և հետևում էր նրա յուրաքանչյուր շարժումին, աւիթ էր փնտռում ընդմիշտ մաքրելու իր հաշիվները նրա հետ:

1935 թվի հունիսի 12-ին Աննա Պաուկերին ձերբակալեցին ուրիշ շատ հեղափոխականների հետ միասին: Յերբ նրան և ընկ. Կալեվին մեքենա էյին դնում, գաղտնի վոստիկանության գործակալները սկսեցին կրակել: Գնդակներից մեկը մնաց Աննայի վոտքում:

Ռումինիայի լայն ժողովրդական մասսաները լավ են ճանաչում և սիրում Աննա Պաուկերին: Դրա համար հասկանալի չե, վոր ռումինական իշխանությունները վորոշեցին նրա և ընկերների «դատը» կազմակերպել Կրայոնի փոքրիկ քաղաքից ? Կիլոմետր հեռավորության վրա սակրավոր առաջին գնդի զորանոցում: Դատավարության ժամանակ զորանոցի բակը 2 կիլոմետր

տարածութեան վրա ողակված եր պահակներով և զընդացիրներով:

1936 թ. հունիսի 5-ին սկսվեց Աննա Պաուկերի դատավարութունը: Զինվորական դատարանի առջե ներկայացան 19 հեղափոխականներ: Չնայած հարուցված խոչընդոտներին, Աննա Պաուկերին հաջողվում է յելույթ ունենալ:

Դատարանում Աննա Պաուկերը մերկացրեց ռումինական կառավարութեանը և «արդարադատութեանը», վորոնք դավաճանում էին ժողովրդին և յերկրին:

«Ինձ,— ասում եր Աննա Պաուկերը,— կարող ե դատել միայն ժողովուրդը: Յես հպարտանում եմ նրանով, վոր հեղափոխական մասսաների ներկայացուցիչն եմ հանդիսանում: Յես կոմունիստկա յեմ և այդ չեմ թագցնում: Մենք պայքարում ենք խաղաղութեան համար, պայքարում ենք ընդդեմ ռեակցիայի և պատերազմի»:

Բոյարական արդարադատութունը Աննա Պաուկերին դատապարտեց 10 տարվա բանտարկութեան: Բոլոր դատապարտյալները ընդհանուր հաշվով 146 տարվա բանտարկութեան դատապարտվեցին: Այժմ Աննա Պաուկերը գտնվում է Գոմբրովենի կանաչի բանտում: Դատավարութեան և բանտարկութեան նրա ընկերուհին՝ Դոնկա Սիմոնը չկարողացավ տանել այդ բանտի սարսափելի ռեժիմը և մեռավ 26 տարեկան հասակում:

Աննա Պաուկերի վրա կազմակերպված դատավարութունը զայրույթի փոթորիկ առաջացրեց վոչ միայն Ռումինիայի առաջագեմ խավերում, այլ մի շարք յերկրներում: Զինվորական տրիբունալը դատավարութեան ընթացքում հազարավոր նամակներ ստացավ Ֆրան-

սիայից, Բելգիայից, Չեխո-Սլովակիայից, Ամերիկայից, վորոնցում համերաշխութուն եյին արտահայտում խիզախ հեղափոխականուհուն:

Բանտում ևս Աննա Պաուկերը վայելեց բոլոր բանտարկյալների սերը և հարգանքը: Ռումինական հեղափոխականուհու անունը հայտնի յե իր յերկրի սահմաններից շատ հեռու: Ռումինական կամավորները, վորոնք կռվում եյին Իսպանական ռեսպուբլիկայի ճակատներում, նրա անունով կոչեցին իրենց հրանոթային խումբակը:

«Քեզ հետ միասին,— գրում եյին նրանք,— բանտերում տառապում են ռումինական հազարավոր մարտիկներ: Արագոնիայի և Տորտոսի դաշտերում «Աննա Պաուկերի անվան խմբակը» վրեժ ե առնում Ձեր տանջանքների համար, անվեհեր մարտիկների տանջանքների համար»:

Գտնվելով բանտում, հիվանդ, տանջված բանտային ծանր ռեժիմով, Աննա Պաուկերը միջոց գտավ արտահայտելու իր սերը դեպի Իսպանիայի հերոսական ժողովուրդը: Նա շարք գործեց և այն ուղարկեց Դոլորես Իբարուրիային ի նշան համերաշխութեան ռումինական կանանց Իսպանիայի ժողովուրդների հետ: Ի պատասխան այդ հուզիչ ընծայի Պանսոնարիան նրան պատասխանեց հետեյալ նամակով.

«Ամենաթանկագին, բոլորից սիրված ընկեր: Ստացա քո ընծան...Քո գործած շարքը ունի հենց այնպիսի կարմիր գույն, ինչպիսին ե մեր դրոշը, ինչպիսին ե միլիոնավոր մարդկանց կողմից թափված արյունը՝ ամբողջ աշխարհում ազատութեան համար մղվող պայքարում, նա նման ե այն արյանը, վորով վոլողված են իմ սքանչելի յերկրի գյուղերը...»

Ընկեր Աննա Պաուկեր: Քո անունը հայտնի չե իսպանական բոլոր կանանց: Այն տանջանքները, վորին քեզ դատապարտեց ռեակցիոն դասակարգը կենդանի արձագանք առաջ բերեց իսպանական կանանց սրտերում: Մեր սքանչելի Իսպանիայի ամենահեռավոր գյուղերում, պարիսպների վրա, վորոնք շրջապատում են հարուստների կալվածքները, հասարակական շենքերի և բոլոր բնակարանների պատերի վրա կրակոտ տառերով վառվում եր «Աղատենք Աննա Պաուկերին» լողունգը: Նա հնչում եր ինչպես բոցավառ բողոք, նա յուրաքանչյուր ուր հիշեցնում եր հանցագործության մասին, վորը կատարված ե հեղափոխականուհի կնոջ դեմ, նա վկայում ե ամուր կապերի մասին, վորոնք միացնում են բոլոր յերկրների հեղափոխականներին:

Իսպանիայի հեղափոխական կանայք ճանաչեցին և սիրեցին քեզ: Յես հաճախ եմ հիշում քեզ և ամեն անգամ սիրով ու հարգանքով ուշադրությամբ նայում մեր թերթերի և ամսագրերի եջերում զետեղված քո անմոռանալի պատկերին, ընկ. Աննա Պաուկեր, մի կնոջ տիպարի, վորին չխորտակեց վոչ մի հալածանք, վորը արիաբար սպասում ե իր ազատագրման ժամին նրա համար, վորպեսզի կրկին սկսի հեղափոխական աշխատանքը:

Վողջույն քեզ Աննա Պաուկեր: Իսպանիայի հեղափոխական կանայք վողջունում են քեզ վորպես հիանալի սիմվոլի, վորը մարմնացումն ե ռումինական կանանց: Իսպանիայի հեղափոխական կանանց անունից չես ուղարկում եմ իմ վողջույնի հետ միասին իմ ամենասրտակից բարեկամության արտահայտությունը:

Աննա Պաուկերը շատ ե հիվանդ: Անհրաժեշտ ե վիրաբուժական միջամտություն, վորպեսզի դուրս հանվի նրա վոտքի մեջ մնացած գնդակը: Բայց Դոմբրովենու աղմինիստրացիան մերժում ե նրան ցույց տալ քժշկական ոգնություն:

Շատ բանտեր կան Ռումինիայում—Դոմբրովենու կանանց բանտը, Ժիլավան, վորը ռումիններեն նշանակում ե «խոնավություն», Վակարեշտի քարե տոպրակները, Այուդի հեղձուցիչ խոցերը, Ոկնեճմարի տաժանակիր բանտը, Դաֆտանի սարսափելի բանտը: Բանտերի ստորերկրյա կաղեմատներում տառապում են ռումինական ժողովրդի հազարավոր զավակները: Արյունարբու դահիճները կատարելով իրենց տերերի կամքը, դիմում են բոլոր միջոցների, վորպեսզի վոչնչացնել ռեակցիայի և պատերազմի դեմ մարտնչող կայուն, արի մարտիկների կյանքը: Բայց հեղափոխության մարտիկները չեն հանձնվում: Նրանք արիաբար են նայում ապագային:

«Մեր գործը,— ասեց Աննա Պաուկերը՝ նրան այցելության չեկած Ֆրանսիայի և Բելգիայի կանանց պատգամավորներին,— վաղ թե ուշ կհաղթանակի: Շատերը մեզանից կմեռնեն, բայց մեր գաղափարը կհաղթանակի»:

ԻՅՈՐԴԱՆ ԼՅՈՒՏԻՐՈՂՄԱԿԻՅ

Իյորդան Լյուտիբրոդսկին ծնվել է Վրացա քաղաքում (Բուլղարիա), բանվորի ընտանիքում: Նրա հայրը ներկարար եր և դժվարությամբ եր մի կտոր հաց վատակում բազմանդամ ընտանիքի համար: Մանկական հասակից Իյորդանին բաժին ընկավ աղքատությունը և կապիտալիստական շահագործումը: Այդ խելոք և աղքատ տղան փափակում եր սովորել: Բայց նրան դժվարությամբ է հաջողվում ավարտել յոթնամյակը, վորովհետև դեռ յերեսա հասակից նա ստիպված է լինում աշխատել, վորպեսզի ոգնի հորը: Տասներկու տարեկան հասակում, դեռ աշակերտ չեղած ժամանակ, նա արձակուրդներին աշխատում է «Պլակալնիցա» պղնձի հանքերում, վորոնք գտնվում էին Վրացանի մոտ յեղով լեռներում: Նա վեր եր կենում առավոտյան վաղ և քնաթաթախ, գրեթե սոված, մազլցում լեռան զառիթափ լանջով, իջնում հանքի խորքը, լցնում փոքր վագոնները հանքով և գլորելով բարձրացնում նրանց վերեւ:

Բայց պատանու ծանր կյանքում կային և ուրախ բուպեներ: Փոքրիկ Իյորդանը սիրում եր իր հետ միասին գնալ Վրացա քաղաքի կոմունիստ բանվորների ակումբը: Այստեղ նա ճանապարհ է գտնում դեպի պատանեկական հեղափոխական խմբակները, վորոնցում նա ակտիվ մասնակցություն է ունենում: Հոր հետ միասին



ԻՅՈՐԴԱՆ ԼՅՈՒՏԻՐՈՂՄԱԿԻՅ

նա հպարտորեն քայլում է Մայիսմեկյան ցույցի շարքերում:

1925 թվին բանվորները և գյուղացիները—Բուլղարիայի չքավորները—կոմպարտիայի ղեկավարութեամբ ապստամբեցին բուրժուական դիկտատուրայի դեմ: Բայց ապստամբությունը ճնշվեց: Բուրժուական դաժանորեն դատապարտեց հեղափոխականներին: Սեպտեմբերյան ուշ գիշերին ժանդարմները ներգրավեցին կոուտիբրոդսկիների փոքրիկ տնակը: 13 տարեկան տղայի աչքերի առջև կիսամահ ծեծեցին հորը, շղթայեցին և բանտ տարան:

Այդ մոմենտը Իյորդանի հիշողության մեջ մնացել էր կյանքի ամբողջ ընթացքում: Յերիտասարդի սրտում խոր ատելություն ծագեց դեպի ժողովրդի թշնամիները: 16-ամյա Իյորդանը աշխատանք վորոնելով (տեքստիլ գործընթացի ավարտելուց հետո) ընկնում է Ռուսսու քաղաքը, վերը գտնվում է Դունայի վրա, ուր մտնում է տեքստիլ գործարանը: Այստեղ սկսվում է հեղափոխական մարտիկի իսկական գիտակից կյանքը: Կապիտալիստական հրեշային շահագործումը աճում է որեց-որ՝ ավելի ու ավելի դժգոհություն առաջացնելով բանվորների շարքերում, հաճախակի լին դառնում գործադուլները: Մի այդպիսի գործադուլներից մեկի կազմակերպիչը և նախաձեռնողը 17-ամյա Իյորդանն էր: Գործարանատերը նրան այդ բանի համար դուրս շարտեց գործարանից:

Սոֆիա քաղաքի ծալրամասում գտնվող «Ձորտունա» տեքստիլ գործարանում, ուր Իյորդանն աշխատում է 1928 թվից, նա բանվորների սիրելին է դառնում: Բանվորները ուշադրությամբ լսում են Իյորդանի խոս-

քերը, վորը կոչ եր անում նրանց պայքարի յեկեկու յերջանիկ կյանքի համար: Յերբ հենց նույն տարում Բուլղարիայի աշխատավորները միասնական թափով վոտքի յելան ոգնելու յերկրաշարժից տուժած Պլովդիվ քաղաքի բանվորներին, չնայած Իյորդանի նյութական սուղ պայմաններին, նա զրկելով իրեն ամեն ինչից, իր մոտ ե վերցնում բանվորական ընտանիքից մի վոքը տղայի ե հայրական հոգատարություն ե ցույց տալիս նրա նկատմամբ:

Իյորդանի խելքը ե ճարպկությունը դուր են գալիս նույնիսկ գործարանատերերին — իրեն՝ իտալական կոնցեսիոներներին: Ցանկանալով իրենց կողմը քաշել Իյորդանին, գործարանի լավագույն բանվորին, նրանք խոսք են տալիս նրան վարպետ դարձնել ե Իտալիա սովորելու ուղարկել: Բայց Իյորդանը հպարտորեն հրաժարվում ե այդ առաջարկից, գերադասելով մնալ իր տեղում բանվորներին նվիրված բարեկամ, այլ վոչ թե լինել նա, ով բարձրացնում ե գործարանատերերի մտրակը բանվորների վրա:

«Փորտոնա» գործարանում Իյորդանը բանվորների միջև կազմակերպում ե ընդհատակյա կոմյերիտական բջիջ ե մասսայական մեծ աշխատանք ե տանում: Կիրակի որերին նա բանվորների համար եքսկուրսիաներ ե կազմակերպում դեպի շրջակա լեռները, ուր նա նրանց հետ զրույցներ ե կազմակերպում, իր հետ բերում ե արգելված գրքեր, խոսում ե նրանց հետ կապիտալիստների հետ տեղի ունենալիք գալիք մարտերի մասին: Գիշերը նա բանվորական թաղամասերում անլեզալ թոռացիկներ ե ցրում, վորոնք բանվորներին պայքարի են կոչում, իսկ յերբ գործադուլ եր ծագում, նա ակտիվ մասնակցություն ե ունենում ե ղեկավարում ե այն:

Հալածանքները կոմյերիտության դեմ ավելի ուս-վելի յե ուժեղանում: 1929 թ. Սոֆիայում տեղի յե ունենում կոմյերիտական կազմակերպության տապալումը: Իյորդանը առաջին անգամ ընկնում ե վոստիկանության ճանկը: Գաղտնի վոստիկանության տված տանջանքները նա տոկուն կերպով ե տանում: Հեղափոխական գործունե-յության համար Իյորդանին, վորպես անչափահասի, դա-տապարտում են 5 տարվա բանտարկության: Նա 3 տարի անցկացրեց տաժանակիր բանտում ե ազատվեց ներման տակ ընկնելով:

Բանտում յեղած ժամանակ զուր չանցավ յե-րիտասարդ հեղափոխականի համար: Բանտային դաժան ուժիմի դեմ մղած պայքարում նա ե՛լ ավելի կոփվեց, նրա աչքերում յերևած համառ վրձ-ռականություն: Կենտրոնական բանտը Սոֆիայում ե Շումինսկու տաժանակիր բանտը Իյորդանի համար դպրոց հանդիսացան, ուր նա ավագ, քաղաքականապես ավելի պատրաստված ընկերների ոգնությամբ ուսում-նասիրում ե տիրապետում եր մարքսիզմ-լենինիզմի հեղափոխական տեսությանը: Յերբ բանտի յերկաթյա-ծանր դռները բացվեցին ե բանտի ընկերները նրան ճամբա ելին դնում ուրախ բացականչություններով ե ցանկություններով, նա դարձավ դեպի նրանց ե բացա-կանչեց. «պայքար, պայքար մինչև վերջ, մինչև հաղթա-նակ»:

Բանտից դուրս գալուց հետո կոմունիստական պարտիան ընդունում ե նրան իր շարքերը: Իյորդանի ամբողջ միտքը ուղղված ե դեպի պայքարը: Բայց բանտը ե տանջանքները քայքայել ելին նրա առողջու-թյունը: Ընկերները դժվարությամբ համոզում են նը-րան լեռները գնալ հանգստանալու: Այստեղ նա հաճախ



ե զրուցում գյուղացիներին հետ: Մարգագետնում, աղմկալից հոսանքի մոտ նա պատմում է նրանց հեքյաթային յերկրի—Խորհրդային Միության մասին, ուր բանվորներն ու գյուղացիները նոր յերջանիկ կյանք են ստեղծում: «Այնտեղ,—ասում է նա,—արեւելքում մի յերկիր է գտնվում, վոր ձգում է մեր սրտերը դեպի իրեն, յերկիր, ուր ապրել է մեռել է Լենինը, ուր ապրում է մեր սիրելի Ստալինը: Մի անգամ միայն, թեկուզ կարճ ժամանակով, յես կցանկանայի լինել այնտեղ,— և հավաքելով իր ուժերը նա կրկին շարունակում է,—«մենք նույնպես կբանդենք հին աշխարհը և կկառուցենք նորը, և նույնիսկ մեզ յեթե մահը սպառնա մեր հաղթանակը կապրե»:

Գյուղացիները սիրեցին նրան, նրանց համար ծանր էր բաժանվել Իյորդանից, բայց պարտիան և կոմսոմոլը ուղարկում են նրան մայրաքաղաք ընդհատակյա աշխատանքի: Իյորդանն իր ամբողջ հեղափոխական կրթությունով կրկին անցնում է ընդհատակյա աշխատանքի յերիտասարդության մեջ: Լինելով կոմյերիտմիության շրջանային կոմիտեյի անդամ, նա իր ամբողջ ուժերն տալիս է շրջանային կազմակերպության ամրապնդման գործին: 1932 թ. կոմյերիտմիության ԿԿ նրան նոր պատասխանատու խնդիր է հանձնարարում—վերականգնել կոմյերիտմիության կազմակերպությունը Վրացանայի շրջանում: Չունենալով փուն և հանգստություն, ընդհատակյա աշխատանքի ծանր պայմաններում, Իյորդանը լինում է շրջանի բոլոր անկյուններում, կրկին ստեղծում է կոմյերիտական բջիջներ և շրջանային կոմիտեներ: Կոմյերիտական աշխատանքը կրկին աշխուժանում է: Շուտով Իյորդանը հրավիրում է շրջանային անլեզալ կոնֆերանս: Իմանալով նրա

հավատարմությունը բանվոր դասակարգին կոմյերիտականները նրան ընդունում են կոմյերիտմիության շրջանային կոմիտեյի քարտուղար և Իյորդանը կրկին անխոնջ կերպով աշխատում էր ամուր հեղափոխական կազմակերպություններ ստեղծման վրա:

Տեխնիկական ապարատում, վորը զբաղվում էր անլեզալ գրականության տեղափոխմամբ, կազմակերպության մասնակիցների մեկի դավաճանության հետեվանքով ձախողում է տեղի ունենում: Վոստիկանները և վոստիկանական լրտեսները վորոնում են Իյորդանին, բայց նա անհայտացել էր: Նա Սոֆիա յե տեղափոխվում: 1933 թ. մայիսի մեկին շուրջկալության ժամանակ Իյորդանը, վոր այդ ժամանակ թագնվում էր ուսանող ընկերոջ բնակարանում, բռնվում է խուզարկության ժամանակ: Նրան ձերբակալեցին, բայց լինելով ուժեղ և խելամիտ, նա իրեն չկորցրեց— ուժեղ հարվածով վոստիկանին գետին գլորեց, խեց նրա ձեռքից ատրճանակը և անհայտացավ:

Բուլղարիայի կոմյերիտմիության կենտրոնական կոմիտեն բարձր է գնահատում Իյորդանի հեղափոխական արժանիքը: Լավ կազմակերպիչ և պրոպագանդիստ Իյորդանը 1933 թ. աշխատում է արդեն վորպես կոմյերիտմիության կենտրոնական կոմիտեյի հրահանգիչ, վորը նրան վստահում է ամենապատասխանատու հանձնարարություններ:

Ռուսաստան—կարևոր նավահանգստային արդյունաբերական քաղաք է, բայց կոմյերիտմիության կազմակերպություն քաղաքում և շրջանում ջախջախված է կոմյերիտմիության կենտրոնական կոմիտեն հանձնարարում է Իյորդանին մոբիլիզացիայի յենթարկել Ռուսաա քաղաքի կոմյերիտմիությունը և կազմակեր-

պել աշխատավոր յերիտասարդության պայքարը նոր իմպերիալիստական պատերազմի դեմ:

Իյորդանն արագությամբ կատարում է այդ խնդիրը, առաջին հերթին նա կապ է ստեղծում մասսաների հետ: Նրա անմիջական ղեկավարությամբ ստեղծվում է ընդհատակյա տպարան, ուր տպագրվում է «Ռուսսիյան կոմյերիտական» անլեզլ թերթը: Սկզբում է կոմյերիտական լայն պրոպագանդան բանվորական և գյուղացիական յերիտասարդության մեջ, Գունայի ռազմական նավատորմի զինվորների և նավաստիների մեջ: Գործարանները և բանվորական թաղամասերը հեղեղվում են թուլցիկներով, վորոնք բանվորներին կոչ են անում դեպի կազմակերպված պայքարի: Վոստիկանությունը կատարում է, զգալով, վոր Ռուսսում կա կոմունիզմի լուրջ և փորձված կազմակերպիչ ու պրոպագանդիստ: Նա բանվորական շարժման հարված է պատրաստում: 1934 թ. Ռուսսայում տեղի չե ունենում անլեզլ կոմունիստական կոնֆերանս: Զեկոցում է տալիս «Յեվգենին»: Վոստիկանությունը շրջապատում է տունը, ուր տեղի չե ունենում կոնֆերանսը: Համարձակ թույլ դեպի պատուհանը և «Յեվգենին» անհայտանում է դիշերային մթնոթյան մեջ: Նա փախչում է, նրան հետապնդում են, բայց նա ազատվում և կրկին մեկնում է Սոֆիա: Տեղի են ունենում յերիտասարդ բանվորների, գյուղացիների, Գունայի ռազմական նավատորմի նավաստիների մասսայական ձերբակալումներ: Վոստիկանությունը իմանում է, վոր «Յեվգենին» դա Իյորդան Լյուտիբերոսկին է: Վոստիկանությունը մոտ կես տարի վորոնում էր նրան:

1934 թ. հոկտեմբերի որերից մեկի վաղ առավոտյան

վոստիկանական ողակով շրջապատվում է այն տունը, վորտեղ ընդհատակյա բնակարանում ապրում էր Լյուտիբերոսկին: Փախչելու վոչ մի հնարավորություն չկար: Իյորդանին ձերբակալում են:

Բանտը չընկճեց յերիտասարդ կաշուն հեղափոխականին: Բանտապանները չկարողացան մի բառ անգամ պոկել նրանից: 1934 թ. նոյեմբերի 30-ին Իյորդան Լյուտիբերոսկին Ռուսսա քաղաքի զինվորական դատարանին ներկայացավ Գունայի ռազմական նավատորմի նավաստիների մեջ հեղափոխական աշխատանք տանելու մեղադրանքով: Դատարանում նա իրեն պահում է զարմանալի սառնասրտությամբ: Համարձակորեն և կրակոտ կերպով նա պաշտպանում է իր դադափարները, սիրելի կոմյերիտությունը, իր պարտիան, վորը նրան դաստիարակել, հեղափոխական էր դարձրել:

Մահապատիժ—այդպես էր դատարանի վորոշումը:

Բուլղարիայի աշխատավորները՝ անհանգստացած իրենց սիրելի զավակի ճակատագրով, բողոքում են, պահանջում են ազատել Իյորդանին: Ամբողջ աշխարհում ձայներ են բարձրանում նրա պաշտպանման ոգտին:

Թշնամիները ըզգում են և գիտեն, թե ինչպես թանգ է ժողովրդին այդ յերիտասարդ, ազատության գործին մինչև վերջ հավատարիմ մարտիկը: Ռուսսայի հին բանտը նրանց բավարար չափով հուսալի չե թվում և նրանք Իյորդանին տեղափոխում են Վարնայի մարզային նոր բանտը, ուր այն ժամանակ պահվում ելին քաղբանտարկյալները: Այդ բանտում թշնամիները մրտածեցին ի կատար ածել մահապատիժը: Լյուտիբերոսկուն չեղոքացնում են, բայց քաղբանտարկյալների

հումկու բողոքը ստիպում է բանտի դիրեկցիային վերացնել չեզոքացումը:

Յերկար ամիսներ է անցկացնում Իյորդանը այդ բանտում սպասելով մահապատժի ի կատար ածման:

Ամեն յերեկո նա պառկում է մտածելով—վաղը կը վերջանա: Բարձրահասակ, նիհար, շղթաների ծանրության տակ կռացած, նա դանդաղորեն քայլում էր բանտի միջանցքներով: Կայուն, լուրջ, մտախոհ սև աչքերը խոր և քնքույշ են նայում: Թեթև ժպտալով, նա կատակում է ընկերների հետ. «յեկեք վերջին անգամ մի անգամ ել շախմատ խաղանք...»

Նախքան Իյորդանին մահապատժի յենթարկելը, բանդապահները փորձում են ընկճել նրա կամքը, համոզել նրան հրաժարվել իր կոմունիստական գաղափարներից: Սակայն զուր, նա անսասան է մնում:


Նրա, Լյուտերբրոդսկու հոր զգացմունքների հետ խաղալով, վորը արդեն հուսահատվել էր, թե կարող է ազատել իր սիրելի վորդուն նրանք համոզում են նրան, վորպեսզի նա ներման դիմում տա: Ի պատասխան դրան: Իյորդանը գրում է հորը: Բերում ենք քաղվածքներ այդ նամակից:

«Վարնայի բանտ, 3 մայիսի 1935 թ.

Թանկագին հայր:

Այս որերը յես ստացա քո նամակը: Դու ինձ Լյուտերբրոդ էս տալիս անել ամեն ինչ, վորպեսզի ազատեն ինձ կախաղանից և գրում ես՝ արա այդ դեռ ևս այսօր, վորովհետև կարող ե պատահել, վոր վաղն արդեն ուշ լինի: Մի՞թե դու չես հասկանում, վոր քո առաջարկը իսկական մահ է նշանակում, յեթե անգամ յես պահպանեմ կյանքս: Վորպեսզի դու այդ հասկանաս, մենք պիտի խորը քննենք այդ հարցը:

Ներկա մոմենտում բուրժուազիային հաջողվեց պրոլետարիատին և նրա պարտիային հասցնել բավական ծանր հարված: Բայց միթե դա նշանակում է, վոր բուրժուազիայի տիրապետությունը ամրացավ և վերջնական հաղթանակը չի պատկանելու պրոլետարիատին: Վոչ: Յեթե վոչ այսօր, ապա վաղը պրոլետարիատը կը-



Մարի Լյուտերբրոդսկին իր փոքրիկ Իլիչի հետ հաղթի մեռնող դասակարգին և իր պարտիայի ղեկավարությամբ առաջ կտանի մարդկությունը: Մենք առաջ գնացող դասակարգի զավակներս և նրա ավանդարդի անդամներս չպետք է շատ գնահատենք մեր կյանքը և զոհաբերենք պարտիայի պրոխտիժը մեր կյանքը պահպանելու համար:

Լավ կասես դու, մտածիր Մարիի և Իլիշի*) մասին. ինչ պիտի անեն նրանք քեզ:

Յես հաճախ եմ մտածում նրանց մասին, հայր: Յերբ յես մտածում եմ նրանց մասին, իմ սիրտը լըցվում է անսահման կսկիծով: Դա տանջանք է, վորը ստիպում է ինձ բոլոր ուժերով սեղմել ծնոտներս ալնպես, վոր ատամներն են կրճատվում, և խոսք տալ ինձ, վոր յես, չնայած այդ բոլորին, կտանեմ, կապահովեմ իմ ուժերը և մինչև վերջին վայրկյանը կմնամ վորպես մարտիկ...

Միլիոնավոր գործազուրկների առջև, նոր պատերազմի վտանգի առջև, բոլոր այն սարսափների առջև, վոր բերում է մեզ կապիտալիզմը, կարող եմ յես արդյոք տալ թշնամուն զենքը գործադրելու մեր բոլորի դեմ. վորի արյունը նա խմում է: Վոչ: Յես այդ անել չեմ կարող և յեթե բուլղարական բուրժուազիան ճիշտ է համարում ինձ մահվան դատապարտելը, ապա դա վրկայում է այն մասին, վոր յես իմ դասակարգի, իմ պարտիայի հավատարիմ զավակն եմ մնացել: Յեմ այդ ձեզ համար, Իլիշի համար, Մարիի համար բավական պիտի լինի: Յես կմեռնեմ, բայց իմ վորդին կհասկանա՝ ինչի համար եր պայքարում նրա հայրը, ինչի համար նա մեռավ:

Դա չի նշանակում վոր յես անառակելիորեն պիտի տամ ինձ կախելու: Հասկանալի յե, վոր պիտի արվի այն բոլորը, ինչ հնարավոր է, վորպեսզի ազատել ինձ, բայց միաժամանակ մի մոռացեք, վոր թշնա-

*) Մարին Իյորդան Լյուտիբրոդսկու կինն է: Իլիշը Լյուտիբրոդսկու վորդին է, վորը ծնվել է նրա ձեռքակալությունից հետո: Այժմ գտնվում է Իվանով ոյի մանկատանը:

մուն չպիտի արդումենտ տալ պարտիայի դեմ: Բոլորից լավը, դա հասարակական կարծիքի մոբիլիզացիան է իմ մահվան դատավճռի դեմ:

Յես հանգիստ կգնամ դեպի կախաղանը, գիտակցելով վոր յես իմ կարճ, բայց պայքարող մի կյանքի ընթացքում յերբեք չեմ արատավորել իմ պարտիայի անունը:

Յեմ պարանը վզիս յես կոչ եմ անում ձեզ՝ գլուխներդ բարձր պահեք հայր, սիրելի կին և իմ փոքրիկ վորդի, վորին յես յերբեք չեմ տեսել: Հառաջ ընկերներ: Հաղթությունը, թեկուզ և ձեռք բերվի թանգ արյան գնով, բայց և այնպես մերը կլինի: Ով պատրաստ է զոհաբերությունների՝ կնվաճի հաղթանակը...

Մարտիկները մեռնում են ֆիզիկապես, բայց նրանք կապրեն հաղթական պրոլետարիատի գիտակցության մեջ և նրանց զավակները կվայելեն այն պտուղները, վորոնց համար պայքարել են նրանց հայրերը և նրանց թվում դու ել կլինես իմ փոքրիկ Իլիշ, վորին յես չեմ կարողացել համբուրել վոչ մի անգամ: Իյորդան Լյուտիբրոդսկի:

Մահից առաջ հորը գրած Լյուտիբրոդսկու այս նամակը կմտնի բանվորական շարժման պատմության մեջ, վորպես հեղափոխական անվախության և կոմունիզմի գործին նվիրվածության փաստաթուղթ:

Մահապատժի նախորդակը մայիսյան տաք գիշերն էր: Բանտում մեռելային լուսնունք էր: Բակում լըսվում էլին ժամապահների համաշափ քայլերը: Իյորդանի քունը չի տանում, նա գրում է:

Վախենալով բանտում կալանավորների բողոքից, հրաման է տրվում այնպես տանել Լյուտիբրոդսկուն:

մահապատժի տեղը, վորպեսզի քաղաքական բան-
տարկյալներին վոչ վոք չիմանա այդ մասին:

Կախաղանի առաջ դատախազը կարդում է դա-
տավճիւրը, հարցնում է Լյուտիբորոգսկուց, արդյոք ու-
զո՞ւմ ե նա մի վորեւե բան ասել: Յեւ Իյորդանը խո-
սեց: Նրա ճառի բովանդակութիւնը, վոր տեւեց 15 րո-
պե, մնաց բանտի պատերի հետեւը. մի փաստ միայն
հրապարակայնութեան սեփականութիւնը դարձավ: Լյու-
տիբորոգսկու կողմից արտասանած խոսքերը այնքան
հուզիչ էին, վոր յերբ նա վերջացրեց, դատախազը բա-
ցականչեց «անիծված զինվորական դատարաններ, ին-
չու իրենք ի կատար չածեցին այս մահվան դատա-
վճիւրը, ինչու մեզ են ուղարկում այդ կեղտոտ աշխա-
տանքին»:

Կանգնած լինելով տախտակամածի վրա, մահվան
ռդակը վզին գցած, Իյորդանը բացականչում է. «առաջ
ընկերներ, հաղթութիւնը մերն է»:

Այսպես մեռավ 1935 թ. մայիսի 9-ին բուլղարա-
կան ժողովրդի ամենաանձնվեր զավակը, ազատութեան
համար մղվող պայքարի անվեհեր մարտիկը՝ Իյորդան
Լյուտիբորոգսկին:



ՍԻՈՒՅԻ ԻՅԻԿԱՎԱ.

ՍԻՈՒՑԻ ԻՑԻԿԱՎԱ.

Տասը տարուց ավելի է, ինչ Ճապոնիայի կոմունիստական պարտիայի առաջնորդ՝ Սիոիցի Իցիկավան դատապարտված է ցմահ տաժանակիր բանտարկության և գտնվում է բանտում: Բանտային սպանիշ ռեժիմի ծանր պայմանները խիստ քայքայել են նրա առողջությունը:

Ճապոնիայում քաղաքական բանտարկյալների հանդեպ գոյություն ունեցող վերաբերմունքը մինչև պատերազմը հանդիսանում էր անվերջ տանջանքներ, իսկ այժմ ե՛լ ավելի դաժան էր դարձել:

Բանտերի թիվը, մինչև պատերազմ Ճապոնիայում 158-ն էր. ներկայումս այդ թիվը խիստ չափով աճել է: Պատերազմի սկզբից 300 հազարից ավելի մարդիկ դատապարտված էին հակապատերազմյան տրամադրությունների համար, բանտային կալանավորման տարբեր ժամանակներով:

Բայց բոլորից սարսափելի ռեժիմը թագավորում է Սբասիրի բանտում, վորը գտնվում է Խոկայգո կղզւում: Սբասիրում բանտարկվածները առաջին հերթին սառապում են կղզու դաժան կլիմայից, վորը գտնվում է Ճապոնիայի հեռավոր հյուսիսում: Քաղ. բանտարկյալների համար բանտը կառուցված է առանձին խուցերի սիստեմով: Այս խուցերն այնքան փոքր են, վոր հիշեցնում են քարե դազաղներ: Նույնիսկ ամենազա-

ժան սառնամանիքներին խուցերը չեն տաքացվում։ Առավոտյան ժամը 6-ից մինչև ուշ գիշեր բանտարկյալները նստած են խցի մեջտեղում, իրենց աշխատանքի վրա կռացած։ Յեվ միայն, յերբ նեղ պատուհանից տալիս են խղճուկ ճաշը, կեղտոտ կոբեկի և բրնձի խառնուրդից կազմված, այդ դեպքում բանտարկյալներին թուլատրվում է միայն մի ակնթարթում բարձրանալ։ Որը մի անգամ նրանց թուլատրվում է 15 րոպեյով զբոսանքի դուրս գալ բակը։

Բանտարկյալներին խիստ կերպով հսկում են դրան անցքից։ Ամենադաժան պատիժն է սպառնում բանտարկյալին, յեթե նա չի կատարում խիստ կերպով նրան առաջադրված շարժումները կամ յեթե ուղղակի բանտապահները նրան չեն սիրում։

Դողալով ցրտից, կռացված, հիվանդ հյուծված լնդախտով, Աբասիրում բանտարկվածների մեծամասնությունը ստիպված է կատարել արտադրանքի բարձր նորմաները, վորն առաջադրված է բանտային ադմինիստրացիայի կողմից։ Վաչ նրանց, ովքեր չեն կատարում առաջադրված նորմաները, դա դիտվում է վորպես բանտային կանոնների խախտում։ Կարցեր— ահա պատիժը այդպիսի բանտարկյալի համար. իսկ կարցերը— դա յերկաթյա բետոնի խուց է ճապոնական 6 ֆունտ տարողությամբ, վորը գտնվում է գետնի տակ։ Ութ որ բանտարկություն կարցերում նշանակում է մահ...

Հինգ տարուց ավելի յե ինչ տառապում է Միոիցի Իցիկավան Աբասիրի քարե տուպրակներից մեկում։ Բանտային ադմինիստրացիան ստիպում է նրան ձեռնոցներ գործել Զինաստանում պատերազմող զինվորներին

համար։ Ճապոնական իշխանությունները փորձում են Իցիկավայի վերաբերմամբ «մեծահոգություն» և «մեղմություն» հայտնաբերել։ Նրանից միայն «մի բան» են պահանջում՝ հրաժարվել իր համոզմունքներից, բայց Իցիկավան բանտում շարունակում է մնալ վորպես պրոլետարական բեմությունցիայի զինվոր, կոմունիզմի համար մղվող պայքարի առաջավոր մարտիկ։ Վոչինչ չի կարող խորտակել նրա արիությունը և կայունությունը։

Իցիկավայի պատասխանը դահիճների փորձերին՝ կաշառելու նրան, հասավ հասարակության և այդպիսով ճապոնիայի բոլոր աշխատավորների սեփականությունը դարձավ։ Իր զառամյալ ծնողներին ուղղած նամակում նա գրում է— «Յես առաջվա պես կայուն եմ, վոչ թե հպարտությունից, վոչ թե փառքի համար, վոչ թե նրա համար, վորպեսզի հավերժացնեմ իմ անունը, այլ վարվում եմ այնպես, ինչպես կվարվեր ամեն մեկը իմ տեղում. յես վարվում եմ պարզ և հասարակ»։

1928 թ. Մարտի 15-ին, առավոտյան ժամը 5-ին վոստիկանության հաղարավոր գաղտնի ագենտներ բախում էյին Տոկիոյի, Ոսակայի, Կոբեյի, Կիյոտոյի և ճապոնիայի ուրիշ քաղաքների առաջավոր բանվորների ու ինտելիգենտների դռները։ Մինիստրների նախագահ Տանակայի հանձնարարությամբ ներքին գործոց մինիստրության գաղտնի վոստիկանության պետ Յամսական բարդուղեմոսյան գիշեր կազմապերպեց կոմունիստների հանդեպ։ Պետական վոստիկանության հատուկ բաժնի պետ Կոկիցիուն հպարտությամբ հաղորդում էր կառավարությանը— «ձերբակալված են 1300 կոմունիստներ։ Մի հարվածով վերացվեց կարմիր վտանգը ճապոնիայում»։

Այդ գիշեր Իցիկավային հաջողվեց խուսափել կա-
լանավորումից: Չթուլացած յեռանդով նա անմիջապես
ձեռնամուխ յեղավ պարտիական շարքերի վերականգնե-
մանը: Նա հաստատուն կերպով տարավ Ճապոնիայի կո-
մունիստական պարտիան Լենինի-Ստալինի ուղիով, հա-
մառորեն ու վճիռականորեն պայքարելով աջ լիկվիդատոր-
ների՝ Յամակավայի*) և «ձախ» ոպորտունիստների
ու սեկտանտների՝ Ֆուկամոտային**) կողմնակիցների
դեմ: Իր գաղափարական և կազմակերպչական անդա-
դար աշխատանքով Իցիկավան ոգնեց ճապոնական
կոմունիստական պարտիային դառնալու մասսայական
պարտիա:

Չնայած նրան, վոր Ճապոնիայի կոմպարտիան
ամբողջ ժամանակ աշխատում էր անլեգալ պայման-
ներում, նրա անդամների քանակը 1927 թ. դեկտեմ-
բեր ամսից մինչև 1928 թ. մարտ ամիսը քառապատկ-
վեց: Պարտիայի անդամների 30 տոկոսը բանվորներ
էին, 10 տոկոսը—գյուղացիներ, մնացածները—ինտե-
լիգենտներ: 1928 թ. մարտ ամսին պարտիան ուներ
արտադրական, գյուղական և թաղային բջիջների մեծ
քանակ: Պարլամենտի ընտրությունների ժամանակ
1928 թ. փետրվարին, Ճապոնիայի կոմունիստական
պարտիան առաջին անգամ կարողացավ իր թեկնա-
ծուներն առաջադրել պարլամենտի համար՝ պրոֆմիու-
թյունների և աշխատավորների ուրիշ լեգալ մասսա-
յական կազմակերպությունների միջոցով: Լայն ագի-
տացիա և պրոպագանդա տարվեց մասսաների մեջ,

մեծ քանակությամբ թուլցիկներ տարածվեցին կոմու-
նիստական լոզունգներով: Այդ կամպանիան հաջողու-
թյամբ պսակվեց: Կոմունիստական պարտիան ավելի
շատ ձայն հավաքեց, քան սոցիալ դեմոկրատիան:
Այդպիսով կոմունիստական պարտիան հնարավորու-
թյուն ստացավ ճապոնական պարլամենտի անունից
կոմունիզմի գաղափարների պրոպագանդա տանել:

Ճապոնիայի կոմունիստական պարտիայի այդ
հաջողություններին քիչ չափով շոժանդակեց Իցիկա-
վայի հեղափոխական գործնելիությունը: Հետեվելով Կո-
մունիստական Ինտերնացիոնալի ցուցմունքներին, դե-
կավարվելով Մարքսիզմ-Լենինիզմի հիմունքներով, վա-
տանաբեն (Ճապոնական կոմունիստական պարտիայի
առաջնորդը) Իցիկավայի հետ միասին կոմպար-
տիայի առաջ դրեցին բուրժուա-դեմոկրատական հեղա-
փոխության, վորը պիտի արագորեն վերաճվի պրոլե-
տարական հեղափոխության խնդիրները: Նա ոգնեց նը-
րան վորպեսզի պարտիային գլխավորի կենտրոնական
կոմիտեն, վորը մտածում և գործում է Լենինյան կեր-
պով, վորպեսզի կենտրոնական կոմիտեյի մեջ մտնեն
ավելի շատ բանվորներ: Շնորհիվ այդ կենտրոնական
կոմիտեյի ճիշտ գծին պարտիան ավելի ու ավելի խորն
էր թափանցում մասսաների մեջ և դեկավարում էր
աշխատավորներին կապիտալի ուժեղացվող հարձակ-
ման դեմ մղվող պայքարում:

Կոմպարտիայի հաջողությունները ստիպեցին բուր-
ժուազիային կրկին արշավ սկսել հեղափոխական

*) Յամակավան—«աջ» ոպորտունիստների լիգերն էր:

**) Ֆուկամոտան «ձախ» ոպորտունիստների լիգերն էր:

շարժման դեմ: 1928 թվի մարտի 15-ը դարձավ շարժման սկիզբը:

Ճապոնական ռեակցիոներները զուր ելին ուրախանում: Մասսայական ձերբակալությունները բարոյալքում չմտցրին պարտիայի շարքերը: Պարտիական ապարատը արագորեն վերակառուցվեց: Արդեն 1928 թ. ապրիլ ամսում սկսվեց լույս տեսնել կոմպարտիայի կենտրոնական որդան «Սեկկի», վորի դեկավար հոդվածները Իցիկավայի գրչին ելին պատկանում: Այն մասին, վոր ռեակցիային չհաջողվեց վերացնել «կարմիր վտանգը» վկայում են այն փաստերը, վոր 1928 թ. նոյեմբերին թագադրության կապակցությամբ, 10 հազար բանվորներ և գյուղացիներ յենթարկվեցին նախնական կալանքի, վորպես «վտանգավոր մտածողներ»:

Կոմունիստական պարտիան ապրում և աշխատում եր շատ խոր ընդհատակում: Խոր ընդհատակում ապրում և աշխատում եր կենտրոնական կոմիտեյի քարտուղար Սիոիցի Իցիկավան: 1928 թ. ամառը նա մասնակցեց Կոմունիստական Ինտերնացիոնալի VI համաշխարհային կոնգրեսի աշխատանքներին: Նա առաջինը բերավ Ճապոնիա Կոմիտեների VI կոնգրեսի բանաձևերը և իրեն հատուկ կրակոտությամբ բացատրում ու մասսայականացնում եր նրանց: Պարտիան ավելի քան յերբեմիցե մասսաների վստահությունն եր վայելում Ճապոնիայում, բանվորները և գյուղացիները ավելի քան յերբեմիցե ականջ ելին դնում նրա լոգունքներին և ցուցմունքներին:

Շնորհիվ Իցիկավայի գործունեյության, պարտիան ամուր կապվեց մասսաների հետ, այնպես ամրացավ, վոր վոչ մի հալածանք և տերրոր չեյին կարող

խախտել նրա հիմքերը: Յերբ 1929 թ. ապրիլ, հուլիս և ոգոստոս ամիսներին կրկին սկսվեցին մասսայական ձերբակալությունները, պարտիայի կենտրոնական որդան «Սեկկին» չդադարեցրեց իր գործնեյությունը: Ավելին, հենց այդ որերին սկսվեց տարածվել յենինիզմի լույսը՝ նոր ընդհատակյա ժուրնալ «Դայնի-Մուսանայա Սինբուն»: Հաջողությամբ անցկացավ հակապատերազմյան որը՝ ոգոստոսի մեկը և Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխության 12-րդ տարեդարձը:

Սակայն ձերբակալությունները, վորոնք տեղի ունեցան 1929 թ., պարտիային հասցրին զգալի հարված: 1929 թ. ապրիլ ամսում ձերբակալվածների թվումն ե գտնվում նաև Սիոիցի Իցիկավան:

Իցիկավան վոստիկանության բանտումն ե: Նրան նստեցրել են նեղ, կեղտոտ, միջատներով վխտացող կալանավորների սենյակում: Յերկու ամիս անընդհատ ցերեկ և գիշեր նրան յենթարկում ելին ամենաստորտանջանքների: Շաբաթներով նրան չեյին թողնում րեել, նրան ծեծում ելին բամբուկի փայտով, տեղահան անում ձեռքերը և վոտքերը: Բայց զուր: Իցիկավան մի բառ անգամ չարտասանեց: Նա հրաժարվում եր տալ մի վորեե բացատրություն: Նրա հերոսությունն անջընջելի տպավորություն թողեց բոլոր բանտարկյալների վրա: Ականատեսներից մեկը այսպես վերջացրեց իր հաղորդումը Իցիկավայի հերոսական վարքի մասին վոստիկանական բանտում. «Յես չեմ իմանում թե ինչ ե կոմունիզմը, բայց յեթե այդ պարտիային դեկավարում ե այնպիսի հերոս, ինչպիսին ե Իցիկավան, ապա այդ յերեկ լավ պարտիա յե»:

Ձերբակալումից 2 տարի հետո, 1931 թ. հուլիսին

«կսվեց Իցիկավայի և նրա հետ միասին ուրիշ ձեղադրյալների դատավարությունը: Ճապոնիայի կոմունիստական պարտիայի կենտրոնական կոմիտեն հանձնարարեց Իցիկավային լուսաբանել դատարանում պարտիայի պատմությունը: Ճապոնական իմպերիալիզմի դեմ մղվող տասը տարվա պայքարի պատմությունը: Իցիկավայն վոչ մի գրավոր նյութեր և փաստաթղթեր չունեի իր ձեռքի տակ: Բացի այդ, դատախազը, դատավորները և վոստիկանությունը անում ելին ամեն ինչ, վորպեսզի չթողնեն նրան խոսելու: Չնայած դրան, Իցիկավայն լիովին կատարեց իր առաջ դրած խնդիրը: Դատարանի ութ նիստերը նա ոգտագործեց նրա համար, վորպեսզի ցուցմունքների անվան տակ պատմել պարտիայի պատմությունը: Նա հմտորեն կարողացավ ներհյուսել իր ցուցմունքներում պարտիայի հրահանգները և ցուցմունքները: Ահա մի քանի քաղվածքներ դատարանի հուլիսի 23-ի նիստի արձանագրություններից.—

Իցիկավայն.— Պատերազմի վտանգը ներկայումս (1931 թ. հուլիսին) ավելի ու ավելի յե մոտենում, մոտենում և հակապատերազմական ուրը— ոգոստոսի մեկը: Ամբողջ աշխարհի բանվորները կոմպարտիայի դրոշի տակ պիտի պայքարեն իմպերիալիստական պատերազմի դեմ բողոքի մասսայական ցույցերի միջոցով: Յեթե սկսի պատերազմը, պրոլետարիատը պիտի տապալի բուրժուական կառավարությունը և իմպերիալիստական պատերազմը վերածի քաղաքացիականի: Այդ միտքը պիտի մասսայականացնել բոլոր յերկրների բանվորների և գյուղացիների մեջ»:

Դատարանի նախագահը (խփում և պլուպիտորին և

բղավում): Յեթե յելույթը պիտի ուղեկցվի նման պրոպագանդայով յես ստիպված կլինեմ փակելու դատարանի դռները:

Իցիկավա.— Յես բոլորովին չեմ զբաղվում ագիտացիայով, յես միայն խոսում եմ այն աշխատանքների մասին, վորը տանում և կոմպարտիան:

Հուլիսի 28-ին Իցիկավայն դատարանում պատմեց կոմիստերնի 4-րդ համաշխարհային կոնգրեսի նշանակության մասին:

Իցիկավա.— «Ճապոնական պատգամավորությունը կոնգրեսում ոգտագործելով յուրաքանչյուր ազատ ընկալե քննում եր Ճապոնական հարցը: Այն ժամանակ վորոշում ընդունվեց պարտիան մասսայական դարձնելու անհրաժեշտության մասին»:

Դատարանի նախագահ.— «Դուք դարձյալ խոսում եք այն մասին: Յեթե կխոսեք թեկուզ մի անգամ ել, յես կփակեմ դատարանի դռները... Չեք ուզում արդյոք դուք դատարանի միջոցով տալ ազատության մեջ գտնվող ձեր ընկերներին նոր հրահանգներ»:

Իցիկավա.— «Մենք համառ կերպով պայքարել ենք և հետգայումն ել համառորեն պիտի պայքարենք նման ճնշման դեմ: Յեվ Իցիկավայն իսկապես ոգտագործեց կոմունիստների այդ դատավարությունը, վորը տեվեց ամբողջ տարի, վոչ միայն հեղափոխական պրոպագանդայի համար, այլ և մասսաներին ծանոթացնելու Ճապոնիայի կոմունիստական պարտիայի հետ: Նա վոչ միայն բացատրեց նրանց պարտիայի քաղաքական գիծը, այլև ցույց տվեց հետագա պայքարի հեռանկարները»:

1938 թ. հուլիսին կայացավ դատարանի յեզրափակման նիստը: Դատախազը մեղադրվող կոմունիստ-

ների համար պահանջում եր դաժան պատիժ և Սիրիցի Իցիկավայի համար մահապատիժ:

Բանվորներն այդ պահանջին պատասխանեցին մասսայական բողոքով: Տոկիոյի հյուսիս-լային շրջանի 41 ձերնարկությունների բանվորները բողոքի բանաձև ընդունեցին դատարանի վերոշման դեմ: Տոկիոյի հարավային շրջանի տաս գործարաններում բողոքի միտինգներ տեղի ունեցան: Մայրաքաղաքի փողոցներով գնում էլին հաղարավոր մարդիկ՝ պահանջելով ազատել Իցիկավային և նրա ընկերներին: Դատարանի շրջանը զինվորական ճամբարի փոխվեց: Դատարանի շենքի մոտ գնդացիներ էլին դրված: Զորքերի և ժանդարմերիայի խռոշողականներ պաշտպանում էին դատարանի շենքը: Այդ լարված մթնոլորտում Իցիկավայն իր վերջին խոսքը արտասանեց: Նա կրկին դատարանի դահլիճը լամբիոնի վերածեց: Ամենայն սրությամբ նա դուրս յեկավ ճաշոնիայում հեղափոխության բուրժուա-դեմոկրատական ետապի վրայով թռչելու տրոցկիստական տեսության դեմ: Պարզ ձևով նա բացատրեց միապետության տապալման անհրաժեշտության և կապիտալիզմի վոլշենչաման համար մղվող պայքարի մասին: Նա ասեց «ուզում ես սպանել զորավարին— կրակիր առաջ նրա ձիու վրա, այսպես ե ասում ժողովրդական հին առակը: Միապետական կարգը դա ձին ե: Կապիտալիստական մասնավոր սեփականության ինստիտուտը— զորավարն ե: Բուրժուազիան ճնշում եր բանվորներին և գյուղացիներին նստելով ձիու վրա, վորը կոչվում ե միապետություն: Ահա թե ինչու վորպեսզի սպանել զորավարին— կապիտալիստական մասնավոր սեփականության ինստիտուտը, մենք մեր բոլոր ուժերը պիտի

գործադրենք, վորպեսզի բոլորից առաջ սպանենք նրա ձիուն— տապալենք միապետությունը... Բայց մենք դրա վրա կանգ չենք առնի: Զորավարը ընկավ ձիուց, բայց նա միանգամից չի մեռնում: Զիուց վայր ընկած զորավարի գլուխը պիտի կտրել, ալլապես փռչի՜նչ չի ստացվի: Դրա համար անհրաժեշտ ե միապետությունն տապալելուց հետո առաջ գնալ, ջարդել կապիտալիստական միապետության ինստիտուտը, կապիտալիստական հասարակարգը»:

Այնուհետև մերկացնելով բուրժուազիայի նողկալի գրպարտությունը, վորը պնդում եր թե. կոմունիստները ժողովրդի թշնամիներն են, Իցիկավայն իր յեզրափակման խոսքում բացականչեց «ում թշնամիներն են հանդիսանում նրանք, վորոնք դուրս են գալիս իմպերիալիստական պատերազմի նախաձեռնողների դեմ, վորոնք բանվորների և գյուղացիների մասսաները քշում են դեպի յեզրայրասպան սպանող մի բուռն բուրժուաների և կալվածատերերի շահույթի համար: Կարելի ե ասել, վոր մենք, վորոնք զլխավորում են գյուղացիների պայքարը, յերբ նրանք վոտքի յեն յենում հող պահանջելով, մենք վոր պայքարում ենք բաժնեկալվածային պետական, վանքապատկան և տգորով կալվածատերերի հողերի բռնագրավման համար, գյուղացիության թշնամիներն ենք հանդիսանում: Այս դատավարությունում յես փորձեցի բանալ ժողովրդի աչքերը մեր կառավարողների հանցագործությունների վրա. մենք մինչև այժմ համառ կերպով պայքարել ենք և մենք կոմունիստներս պայքարելու յենք հետագայում»,— այսպես վերջացրեց իր վերջին խոսքը արի մարտիկ Իցիկավայն:

Յմահ տաժանակիր բանտարկություն-- հայտարարում եր գինվորականության և միապետության շղթայի շների դատավճիռը ճապոնիայի աշխատավորների մարտիկին. 1934 թ. դատավճիռը վերանայող դատարանի կողմից հաստատվելուց հետո Իցիկավան արքորվում է Աբասիրում: Յերբ Սիոիցի Իցիկավան դատարանում պատմում եր կոմունիստական պարտիայի պատմությունը՝ նա ըստ եյության խոսում է սեփական կյանքի մասին, վորովհետև ճապոնիայում հեղափոխական շարժման ծագումից Իցիկավայի կյանքը անխորտակելիորեն կապված է յեղել ճապոնիայի շահագործվող և ճնշվող մասսաների պայքարի հետ ընդդեմ իրենց ճնշողների:

Սիոիցի Իցիկավան ծնվել է 1892 թվին, մանր բուրժուական ընտանիքում, ճապոնիայի փոքրիկ գավառական քաղաքում: Գեռ իր ուսանողական տարիներում նա հիմնեց վոշ մեծ մարքսիստական խմբակ: Համալսարանը վերջացնելուց հետո նա պարապում եր ժուրնալիստիկայով: Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխությունը Ռուսաստանում, 1918 թվի ոգոստոսին բրնձի բուները ճապոնիայում, խոշոր հեղափոխական ազդեցություն ունեցան ճապոնական ժողովրդի առաջադեմ խավերի վրա, հատկապես բանվոր դասակարգի վրա: Սիոիցի Իցիկավան այդ բարձր կուլտուրականության տեր մարդը, չեր կարող հեռու մնալ պատմական մեծագույն դեպքերից: Իցիկավայի աշխարհահայացքը վորոշվեց—նա կոմունիստ դարձավ:

Սիոիցի Իցիկավան է կազմակերպել առաջին կոմունիստական խմբակը ճապոնիայում և Սեն Կատյամայի հետ միասին ակտիվ մասնակցություն ունեցավ ճապոնիայի կոմունիս-

տական պարտիայի ստեղծման գործում, 1922 թվի հուլիսին: Իրեն հատուկ յեռանդով նա իրեն ամբողջովին նվիրեց պարտիայի շինարարության գործին: Նա մասնակցում եր կոմունիստական ժուրնալին, «Մուսան-Կայ-Կույո» («Պրոլետարիատի»), խմբագրման և սյրոպագանդիստական մեծ աշխատանք եր տանում, մանավանդ Տոկիոյի տպագրական բանվորների մեջ:

1923 թ. հունիս ամսին Իցիկավան առաջին անգամ ձերբակալվեց 30 ուրիշ կոմունիստների հետ միասին: Նա համառորեն հրաժարվում եր տալ վորևեց ուղեմուծներ վոստիկանությանը: Յեվ 7 ամսվա բանտարկությունից հետո ազատ թողնվեց:

1926 թ. Իցիկավան ճապոնիայի կոմունիստական պարտիայի կենտրոնական կոմիտեյի անդամ է, իսկ հետո—կենտրոնական կոմիտեյի քարտուղար: Միաժամանակ նա մասսայական լեզալ «Մուսան-Սիա Սիմբուն» («Պրոլետարական թերթ») խմբագիրն եր: ճապոնական կոմպարտիայի իր ղեկավարության տարիների ընթացքում Իցիկավան նվաճեց զգալի հաջողություններ պարտիայի գաղափարական և կազմակերպչական ամրացման գործում:

1929 թ. Իցիկավային նորից ձերբակալեցին, իսկ 1934 թ. փակեցին նրան Աբասիրի քարե տոպրակում: Բայց Իցիկավայի մտքերը, նրա ցուցմուծները և լուղունգները, Մարքսիզմ-Լենինիզմի գաղափարները, վորոնց նա այնպես հիմնալի կերպով կարողանում եր բացատրել և կիրառել կյանքում չեր կարելի լուծության մատնել: Նրանք ազատ են, վորքեվորում են ճապոնիայի աշխատավոր մասսաներին դեպի հետագա պայքարի: Իցիկավայի վորդին ապրում և գործում է ճապոնական ժողովրդի մեջ: Իցիկավայի վորդով եր գործում ճապոն-

նիայի կոմունիստական պարտիան, յերբ ճապոնական զորքերը Մանջուրիա մտնելու ուղղակի մյուս ուրբա զորքերը մաթիվ թուլցիկներով նա կոչ եր անում բանվորներին, գյուղացիներին և զինվորներին յեղբայրանալ չինական բանվորների և զինվորների հետ, յերբ նա պահանջում եր ճապոնական զորքերին հետ կանչել Չինաստանից: Իցիկավայի վոգին ապրել և ապրում ե ճապոնական զինվորական բազմաթիվ մասերում, վորոնք հրաժարվում են կովել չինական ժողովրդի դեմ: Իցիկավայի վոգով, կոմունիստական պարտիայի վոգով եր գործում ճապոնական անհայտ զինվորը, վորը զոհաբերեց իր կյանքը ի նշան յեղբայրական համերաշխության, վորպեսզի հանձնի Կիրին գավառի (Մանջուրիա) չինական պարտիզաններին ուղարկված ընձան՝ բեռնատար մեքենան 60 հազար փամփուշտներով:

Սիոիցի Իցիկավան շարունակ բարձր եր գնահատում միջազգային համերաշխությունը բոլոր աշխատավորների հայրենիքի—Սովետական Միության հետ: Դատարանում արտասանած իր ճառում Իցիկավան խոսելով Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխության նշանակության մասին, Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի Միությունում, — հայտարարեց, — «բոլորից գիտակից և ակտիվ տարրերը վողջունում եյին այն ժամանակ Ռուսական հեղափոխությունը, վոչ թե միայն ծովի մյուս կողմում, բայց և Սիրիբ գնալով անցնում եյին ծովը, համարձակ պրոպագանդա եյին անում ճապոնական ճակատում զինվորների մեջ ընդդեմ ինտերվենցիայի, պաշտպանելով Ռուսական հեղափոխությունը: Այդ արի և գիտակից բանվորների մեջ եր ըն-

կեր Սատոն: Նա ընկավ հերոսական պայքարում, Սիրիբում»:

Սիոիցի Իցիկավայի այս խոսքերը, արտասանված դատարանի դահլիճում, ուղղված եյին ամբողջ ճապոնական ժողովրդին: Ճապոնական կոմունիստական պարտիայի առաջնորդի խոսքերը ճապոնիայի աշխատավորների համար ցուցմունք, հրահանգ են հանդիսանում:



Պատ. խմբագիր՝ Ն. Կոստանյան
Տեխ. խմբագիր՝ Վ. Մեռնյան
Սրբագրիչ՝ Վ. Խաչատրյան

ՎՊ 2624, պատվեր Տ50, տիրաժ 2500.

Հանձնված է տպագրության 10/IX 1940 թ.

Ստորագրված է տպագրության 24/IX
1940 թ.

Հայկական ՍՍՌ ԺԿՍ-ին կից քերթերի և
ամսագրերի տպարան, Երևան.

ՀՀ Ազգային գրադարան



NL0186819

ԳԻՆԸ 70 ԿՈՊ.

БОЕВЫЕ РЕВОЛЮЦИОНЕРЫ:
Анна Паукер, Иордан Лютибродский,
Сионици Ицигава.

Издание Цек МОПР-а Армянской ССР
Ереван—1940 г.